

71. ՀՈՎՎԻ ՀԵՔԻԱԹ

Հովիվ՝ ինք, ուր կնիկ կովըտան, ըռկավ, գնաց առավ ղուր կուլավ վրեն, ըղուր չոմախ ձեռ, ընկավ ճամբախ, տասն ավուր ճամբախ գնաց, գնաց տեսավ օր քոշկըմ կա՝ հարամու քոշկ. էդ հարամին ուր ծառաներ կօղորկեր էս դին, էն դին օր մարդ իսան գտնեն, բերեն կտրտեն. էդ ճամբախն էլ իսկի ավտե ըռպար չիգեր, չէրթեր։ Էսօր ծառաներ էկան բռնեցին զէտ հովիվ, առան գացին, տարան մեծի խեչ։

Տարան էնտեղ, հովվին ասաց.—Դու ի՞նչ մարդ ես։

Հովիվ մեկ կրկնակ ասեց վրեն կանչելով.—Դո՞ւ ինչ մարդ ես։

Հարամոց մեծ ասաց հովվին. —Դու չվախենա՞ս ընձմե։

Հովիվ ասաց.—Ընչո՞ւ կվախենամ. կիրիշկե՞ս իմ չոմախ. մեկ գըրբ կզարկեմ քըզիկ։

Հարամի բաշին ծիծղաց, ասաց.—Էդոր տակմիշ մ՝էղնեք, թող էրթա ուր ճամբու հետ,—հարամի բաշին ասաց,—օղուլ, գիտնամ թավաքալի մարդըմ իս դու, էկու իս քըզի նամակ մի իտամ, գնա իմ ախպեր ճամբու վրեն է, էն էլ քըզի չդիպչի։

Գրեց ղուր միջնեկ ախպոր. «Էսա մարդ թավաքալի մարդմ՝ է. էս մարդուն պատիվ պահեք, չդիպչիք, ճամբիք էրթա պզտիկ ախ-

պոր խեչ»։ Էն լէ գրեց պզտիկ ախպոր՝ «Էսոր ինչ մուրադ կա, զուր մարամին հասցուա»։

Նամակ էտուր, օղորկեց. հովիվ գնաց միջնակ ախպոր խեչ։

Միջնակ ախպերն էլ ղրկեց գնաց պզտիկ ախպոր խեչ, հովիվ նամակ բռնեց ձեռք, գնաց պզտիկ ախպոր խեչ։

Պզտիկ ախպեր նամակ առավ ձեռք, կարդաց, ասաց.—Լա՛վ, հովիվ, շաբաթըմ մանցի քովս մսաֆրը։

Հովիվ շաբաթըմ մնաց հոն։

Շաբթում սորա, մարդ ճամբու դրեց հովվին, խայեղըմ տրվից հովվին, ասաց.—Կառնես կէրթաս, կթալես ծովի վերա, խայեղ ըղքըղի կտանի թագավորի քաղաք, իմ խայեղ մարդ չտեսնա, սեհրրբաղ ի, մինակ դու կտեսնաս, կկապիս տեղըմ,—մատնիկմ՝ էլ կոտա, կասի,—էս էլ կէձդիս քու ձեռք։ Դե՛ գնա,—ասաց,—էն քաղաք սեհրրբազներ շատ կա, էսա մատնիկ օր զարկես բերանդ, էնոնց սերիք հ՚ըմեն կխրոպին, չեն կանա բամ՝ անի քեզ, ինչ զոր տեղ օր կինաս, էլմա զար բերանդ, հ՚ըմեն բան քու հ՚առեջ կխրոպի,—պզտիկ ախպեր էլմա կասի,—օր կէրթաս թագավորու քաղաք, մրթնուն սրհաթ էրկրսին կէրթաս կնստիս թագավորու փանջարի տակ։ Նստար էնտեղ, սրհաթ էրկրսին թագավորու աղչիկ կրերե բողչեմ՝ կթալե։ Կվերցիս բողչեն դընիս կուշտ։ Վերջեն թագավորու աղչիկ ինքն էլ կիգա բողչի խեչ։ Ձեն չէնիս իսկի, չի զրուցիս։ Կէլնիս զթագավրրու աղչիկ կառնիս խրտ էն բողչին կիգաս նստիս էն խայեղի վրրեն։ Խայեղ կթորկիս ծովու վրրեն, ամսրվամ՝ չափ ճամբախ կէրթաս ծովու վրեն։ Կլուսնա վրրեդ։ Աղչիկ կտեսնա օր ուր կշտի հետ հովիվ մ՚է, վայրենի մարդմ է, էլ բամ՝ չասեր, կասե. «Աստրծուց է, բալքի խսմաթ էսա էղնի»։

Էն աղչիկ ծրռուկ էր ուրիշ տղու վրա, խոսք տված են հ՚իրարու, օր գեր էնտեղ, էնի չէկավ. հովիվ քընց էն հ՚առեչ էկավ։

Էն հովիվ գնաց ուրիշ թագավորանիստ քաղաք մը հ՚էլավ դուս տեսավ օր մարդմ՝ էկավ էն դիհեն։

Ասաց.—Ախպե՞ր։

Ասաց.—Ի՞նչ է։

Ասաց.—Ընձի խոնախըմ տուր նստիմ, չիտաս՝ չոմախ կղարնիմ գլուխրդ։

Մարդ ասաց.—Ջանը՛մ, մը՛ զարկի, էրթամ քըզի խոնախըմ գտնամ։

Գնաց խոնախրմ գտավ, հովիվ գնաց, հ՝ինք, ուր կնիկ նստան։

Կնիկ ասաց.—Մ՝րդ, աստրված ընձիկ խսմաթ էրեց քեզիկ, էկու,—ասաց,—քու հալվըներ փոխե, ես քու ձեռնեն կէրթամ. ընձի չխլեն քու ձեռքեն։

Ասաց.—Օ՝ֆ, գործ չունիս խրտ ընձի, չոմախ իմ ձեռքն է, վո՞վ կիշխնա մոտենա ընձի։

Սորա ժամանակրմ մանցին, էն աղքատ կնիկ հացի կոլորդեր, մտավ էն տուն՝ հաց ուզեր, զէդ կնիկ տեսավ, խելքն հ՝ընցավ, անչափ օր հովվի կին խորոտ էր։

Էն հաց ժողվող կնիկ էլավ դուս, ուղղակի գնաց Թագավրրու մոտ։

Դռնապաներուն ասաց.—Քաշեք, ես էրթամ թագավորի հետ գործ ունիմ։ Ջթորկեցին, շաբաթրմ մնաց հ՝ոնի, դուռ կայնուկ։

Սորա վերջեն գացին թագավորուն պատմեցին։

— Կնիկրմ էկեր է, շաբաթ մէ, դուռ կայներ է, կուզե գա քու խեչ, խոսք ասելու։

Ասաց.—Կամք տրվի, թող հ՝իգա։

Կնիկ գնաց էնտեղ, թագավորի խեչ։

Թագավոր ասաց.—Ա՛յ կնիկ, ի՞նչ կասես, ընձի պատմե քու խոսքրդ։

Կնիկ ասաց.—Ջանրմ,—ասաց,—դու էլ առեր ես կնիկ, հովիվն էլ առեր ի կնիկ, աշխրհիս վրեն էնպես խորոտիկ չկա, էնի քու լայեղն է։

Թագավորն ասաց.—Կնի՛կ, էլի էրթանք տուն, ընձի նշանց տուր։

Թագավոր էլավ դարվեշի խրլրղ հագավ, գնաց հետ։

Թագավոր հովվի դուռ կանավ.—Ցահո՛, յահո՛ էրեց, սադաղա-սադաղա ուզեց։

Հովիվ ասաց.—Կնի՛կ, էլի էն դարվեշին քանիմ՝ փարա տուր, թող էրթա։

Թագավոր տեսավ ըզհովիվ, ուր կնիկ, խելք հ՝ընցավ, ասաց. —Ցարաբի, էս ո՞րտեղից ընկեր է էդոր ձեռք։

Թագավրրու լայեղն էկավ գլխուն, էլավ գնաց։ Գնաց նստավ ուր թախթրն, կանչեց՝ վազիր էկավ։ Ասաց.—Վազի՛ր, վազի՛ր։

Վազիրն ասաց.—Ի՞նչ է։

Ըսավ.—Հովվին էսպես կնիկըմ. կուզեմ ըզհովիվ ըսպանեմ, կնիկն առնեմ։

Վաղիրն ասաց.—Թագավո՛ր, էնպես բամ՝ չէղնի։ Ամոթ է, ուրիշ թագավորներ լսին օր դու հովվի կնիկն առնես, շատ անպատիվ կէղնիս։

Թագավոր ասաց վաղրին.—Էսոր վերշ ինչպե՞ս կէղնի ապա, օր իմ ձեռք ընկնի էդ կնիկ։

Վաղիրն ասաց.—Թագավո՛ր, ճամբի ֆըլան մեշեն, էրթացող էն մեշեն՝ չի գա։

Կանչեցին հովիվ, տարան։

Ըսավ.—Գնա ֆլան մեշեն, տաս ձի տամ քըզի, փետ բարցի էկու։

Հովիվ ձիանք առեց գնաց։

Վաղիրն ասաց թագավըրուն.—Հովիվ գնաց, էն մեշեն սեհրըբաղ կա, էրթացող էլ չի գա։

Հովիվ տաս ձին, շրիգ. բան ման առեց գնաց, մտավ մեշի մեջ, փետեր կտրից խրլըսավ, բարձավ ձիանք, տեսավ օր ի՞նչ տեսավ, մեկ վիշապըմ էլավ թապըլտավ էն տեխեն էկավ։ Էն մեշեն աշխարընցում էղավ, ջարգրդից մեշեն էկավ։

Էդ գալու ատեն մատնիկ լիզեց, տեսավ էն վիշապ, հուրի փարի աղջիկըմ էղավ։ Ասաց հովվին.—Հովի՛վ, քու բախտ բերուկ էր, քը սովորցնողի վիզ կոտրի, էդ հնարք որ քի սովորցրցիր էր։

Ըղհուրիփարի աղջիկ դրեց ձիաններաց վրեն, առեց էկավ։ Աղջիկ տարավ ուր տուն, թասլիմ էրավ կնկան, բեռներ տարավ տըվից թագավորին։

Թագավոր վաղրին ասաց.—Ջտնը՛մ, էդի չէղավ։

Վազիր ասաց.—Մանի կճամբիմ ուրիշ տեղ, օր էնի գնաց, էլ ըսկի չի գա։

Թաժա կնիկ օր մեշից բիրեց, հովվին ասաց.—Թագավոր ո՞ր-տեղ օր քեղի կճամբե, էկու ըմ խեչ՝ սորա գնա։

Թագավոր հովիվ ուղից օր ճամբի ուրիշ տեղ։

Վազիր ասաց.—Հովի՛վ։

Ասաց.—Ի՞նչ է։

Ասաց.—Կէրթաս ֆրլան մեշեն, ճութըմ խաղող ու փունջըմ վարդ կառնես կիգաս։

Հովիվ ասաց.—Կանի էրթամ տուն ու հ՚իգամ։

Էկավ տուն, թաժա կնկա մոտ, օր մեշից է բերի, ասաց.—

Թագավոր զիս կճամբե ֆըլան մեշի մեջ՝ ճուքըմ խաղող ու փունջըմ վարդ առնեմ, հ'իգամ։

Կնիկն ասաց.—Ա՜յ մարդ. ի՞նչ ջալապ կէրթաս օր բերիս։

Ասաց.—Դու գիտես իմա՞լ էնիմ։

Կնիկ ասաց.—Կէրթաս՝ թագավորուց ուզի չորս դրմակ. կառնես կիգաս, լավ ձիմ' լէ կբերիս։

Հովիվ գնաց ուղից առավ էկավ. օր բերավ, կնիկ ասաց.—Կէրթաս մեշի մեջ, դուռըմ էրկու Ասլան-Խաբլան կա, մեկ՝ էն դեհ, մեկ՝ էն դեհ. կէրթաս օր կմտնես դռնից ներս, դմկընեբաց մեկ կթալես էնդոր, մեկ՝ էնդոր։ Մտար ներս, գացիր էնտեղ ծառըմ կա հավուզի վըրեն, էն ծառու տակը նստես չէրևաս. վեց ջուխտակ եղըվնիկ կա էն հավուզի վրեն, կիգան լողկնան։ Սիվտակ եղըվնկու լիբաս գողցի, ճուքըմ խաղող խետը վարդին գեօ էն հավուզի բոլուր, էն իրեքը կառնես կիգաս։ Կիգաս Ասլան-Խաբլանի խեչ, դմակըմ էնդոր կթալիս, մեկ էլ ընդոր, կէլնիս դուս, կէրթաս ձիու խեչ, էն լիբասի տեր աղչիկն կընկնի էտրվեստ, կիգա, կվերցուս թալիս ձիու թարգին, ձիու գլուխ թորկ, փախցու, իտև մ'իրիշկի, փախցու օր Ասլան-Խաբլանի ձեռքեն ազատիս։

Աղչիկ կբիբե կիշե ուր տուն։ Էլավ իրեք կնիկ։ Կառնե զուր խաղողն ու վարդ, կտանե, կիտա թագավորին։

Թագավոր կասե.—Էսպես բան չէլավ, չարեմ՝ գտի, վազի՛ր, իրեք կնիկ էղավ՝ էրկուս հուրի-փարի, մեկն լէ թագավորի աղչիկ։

Վազիր ասաց.—Կայնի տեղմ՝ էլ ճամբինք։

Էլան շուշեմ՝ տրվիցին ընուր.—Գնա՛,—ասաց,—ֆըլան սարեն աղբըրեն շուշեն ջուր լից առ էկուր։

Հովիվ գնաց կնկան խեչ, ասաց.—Թագավոր հըմլա կասի։

Կնիկն ասաց.—Գնա,—ասաց,—քու վերջի օրն է, պիտի քու մուրադ առնիս։

Էլավ գնաց սար, տեսավ օր ի՞նչ տեսավ, մեկ հ'ուշապըմ բերան բացեր է, կֆըշա։

Հովիվ ուշիկ մատնիկն էզար բերան, վիշապ էղավ երիտասարդ տղեմ'։

Տղեն պատմեց, ասաց հովվին.—Գնա՛,—ասաց,—քու տեղդ նստի, էն թագավոր կվախճանի ու թագավորութուն պիտի առնես դու։

Էկավ մոտիցավ քաղքին, թագավոր վախճանավ, էկավ ուր տուն իջավ, էլ չգնաց դենի։

Կնկտիք էլան փոխեցին ըզհովվի հալվըներ, մեկ թագավորական հալվըներ հագցուցին, էլան օղորկեցին օթաղը փոխեցին, ուրիշ տուն մը նստան։

Էլ ուրիշներ չգիցան էն հովիվ իմալ էղավ. կորա՞վ, թե ուր գնաց.—Ծուում էր,—ասին,—փախեր է, գացեր է,—ասին։

Էն հովվի թարկ տրվիցին. օր տեսան տուն գարտակ, ընկան թագավորու գարդ՝ թագավորըմ դնեն թախթ։

Էկան զէդի գտան, տեսան օր թագավորու լայեղ էր, դրեցին թախթ, զուր թախթ վայելեց, նստավ։